

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
(XIX դար—XX դարի սկիզբ)

Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ

Հայկական տպագրությունը Վրաստանում շնայած սկզբնավորվել է XIX դարի առաջին քառորդում, սակայն նրա նախահիմքերը պետք է որոնել XVIII դ. վերջին տասնամյակներում: Դեռ ավելին, ըստ Ամատերդամի քաղաքապետարանի դիվանական մի քանի փաստաթղթերի, Թիֆլիսում 1680-ական թթ. հայկական տպարան հիմնադրելու փորձ է արել վրաց Արշիլ թագավորը: Նա Ամատերդամի քաղաքագլխի միջոցով հայկական տպագրական տառեր է պատվիրում տեղի վարպետներին: Սակայն ինչ-ինչ պատճառներով ծրագրված հիշյալ տպարանը այդպես էլ չի բացվում¹: Ապարդյուն են անցնում նաև Արշիլ թագավորի՝ Թիֆլիսում վրացական տպարան հիմնելու փորձերը: Զնայած վրաց տպագրություն գոյություն ունեւր վաղուց, որը սկզբնավորվել էր 1629 թ., Հռոմում:

Հետագայում, XVIII դարի սկզբներին, Արշիլ թագավորի հետնորդները սկսեցին հոգ տանել հայրենիքում կամ Ռուսաստանում վրացական տպարան կազմակերպելու մասին: Այդ գործում նշանակալի դեր խաղաց Մոսկվայի վրաց գաղութը, որի ուժերով 1705 թ. Մոսկվայում բացվեց տպարան, ուր նույն տարում տպագրվեց վրաց առաջին գիրքը Ռուսաստանում՝ «Դավիթիանին»:

Սակայն, արտաքին թշնամիների հարձակումների և երկրի ներսում ըստեղծված ծանր պայմանների հետևանքով Անդրկովկասում երկար ժամանակ այդպես էլ հնարավոր չի լինում կազմակերպել տպարան: Հայտնի է, որ առաջին տպարանը ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ Կովկասում հիմնադրվել է վրաց Վախտանգ VI թագավորի կողմից 1709 թ. Թիֆլիսում²: Վախտանգը իր սեփական միջոցներով Վալախիայից (Ռումինիա) բերել է տալիս տպարանական սարքավորանք և հրավիրում տպագրող վարպետներ: Այդ գործում նրան մեծ օգնություն է ցույց տալիս Ռումինիայում տպարան հիմնած Անթիմոզ Իվերիացին³: Սակայն, այդ տպարանը կարճատև կյանք է ունենում, որոշ ընդմիջումներով գործում է մինչև 1722 թվականը: Օսմանցիների ու ղզըլբաշիների Վրաստան կատարած արշավանքի հետևանքով կործանվում է այն, բրից հետո Կովկասում դարձյալ երկար ժամանակ ընդհատվում է տպագրական գործը: Միայն 1749 թ. վրաց Հերակլ II թագավորի և Անտոն I կաթողիկոսի նախաձեռնությամբ փորձ է արվում վերականգնելու օտար նվաճողների ձեռքով ավերված վախտանգյան տպարանը: Բայց վերականգնված այդ տպարանը ևս չի բավարարում Վրաստանի օրեցօր աճող մշակութային ու քա-

¹ Ռ. Իշխանյան, Հայ գիրքը. 1512—1920, Երևան, 1961, էջ 137:

² Տե՛ս X. Գ. Шарашидзе, Первая типография в Грузии (1709—1722), Тбилиси, 1959, էջ 79.

³ Տե՛ս «Վրաստանի պատմություն», Թրիլիսի, 1986, էջ 124—125:

դաքական պահանջները: Հիշյալ տպարանը որոշակի աշխուժացում է ապրում միայն 1762—1764 թթ., երբ Հերակլ II թագավորը Վրաստանում գրատպության գործը զարգացնելու նպատակով բարեփոխություն է կատարում: Այդ ժամանակվանից էլ Թիֆլիսի տպարանը կաթողիկոսությունից անցնում է արքունիքին:

Հերակլը ծրագրում է վախտանգյան շրջանի մաշված տառատեսակները փոխարինել նորերով: Այդ նպատակով նա Կոստանդնուպոլսից Թիֆլիս է հրավիրում տպագրական գործի հմուտ կազմակերպիչ ու վարպետ, հայազգի Պողոս Հովհաննիսյանին, որը հետագայում՝ 1807 թ., հայ տպագրության պատմության մեջ հայտնի է դառնում Պողոս Արապյան (1742—1835) անունով:

Պողոս Արապյանը Կ. Պոլսում Աբգար Դպիրի հիմնած հայկական առաջին տպարանից (1567 թ.) շուրջ մեկուկես դար հետո (1699 թ.) տպարան հիմնած Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու թոռն էր, որի օրոք Պոլսի հայկական տպագրական գործը հասնում է իր գագաթնակետին: Նա հայ մշակույթի նշանավոր դեմքերից մեկն է, որն իր կյանքի 93 տարիներից 70-ը նվիրել է հայ տպագրության զարգացմանը: Պողոս Արապյանը մեծ ծառայություն է մատուցել նաև թուրքական տպագրությանը, որի համար Սուլթանը նրան տվել է գլխարկի վրա հատուկ նշան կրելու իրավունք: Նրա համբավը՝ որպես տպագրական գործի հմուտ ղեկավարի, տարածվել էր ոչ միայն Թուրքիայում, որտեղ 1816 թվականից արքունի տպարանի տեսուչն էր, այլև՝ նրա սահմաններից շատ հեռու:

Հերակլ II հրավերով Պողոս Արապյանը 1774 թ. առաջին անգամ գալիս է Թիֆլիս և թագավորի հատկացրած հատուկ միջոցներով ձեռնամուխ լինում տպարանի վերանորոգությանը: Այստեղ ավարտելով իր գործը, նա մեկնում է էջմիածին՝ հետը տանելով տառատեսակներ, որոնք կաթողիկոսը չի ընդունում «վասն խոշորութեան»⁴:

Պողոս Արապյանը մինչև 1780 թ. քանի՞ անգամ է եղել Թիֆլիսում ու էջմիածնում, հայտնի չէ: Սակայն փաստ է, որ 1781 թ. Հերակլը Կոստանդնուպոլիս է ուղարկել իր պալատական Միլիտոնին: Վերջինս Արապյանի հետ կնքել է մի պայմանագիր, որի մեջ ասված է. «Ծն ներքոյ գրեալ տպագրիչ Պողոս Դպիրս, ի վերոյ թուոյն ընդ սոյն Մահտեսի Մելիտոնին զնալոց եմ մէկ սպասատրաւ ի մայրաքաղաքն Թիֆլիս՝ առ ոտս գերագահութեանն նորին և անդ տպագրատուն իմն հաստատեալ զբոլոր տառս վրաց ի շէլիկ փոյրագրեալ»⁵:

Այս պայմանագրի կնքումից անմիջապես հետո Արապյանը նորից է գալիս Թիֆլիս և ձուլում ու քաղաքացիություն տալիս «նուխսա-խուցորի» (եկեղեցական) և «մխեղրուլի» (քաղաքացիական) կոչված տառատեսակներին, որոնք մոռացության էին մատնվել 1722 թվականից ի վեր⁶: Նա գործարկելով

⁴ Տե՛ս Թեոդիկ, Տիպ ու Տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 65—70: Տե՛ս նաև՝ Պ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 138, 174—181, 185—188, 203, Ա. Բաբայան, Հայ գիրքը և տպագրությունը, Երևան, 1963, էջ 74—81, Ռ. Իշխանյան, Հայ գիրքը, Երևան, 1981, էջ 79—80, Լեո, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1986, էջ 602 և այլն:

⁵ Պ. Լևոնյան, Աշվ. աշխատ., էջ 139:

⁶ «Հանքեր Մատենադարանի», Երևան, 1956, հ. 3, էջ 118:

⁷ Տե՛ս «Кавказ», Թիֆլիս, 1846, № 48, էջ 4: Տե՛ս նաև՝ Д. Л. Ватейшвили, Русская общественная мысль и печать на Кавказе в первой трети XIX века, Մոսկվա, 1973, էջ 40: Ի դեպ, վրաց ճանաչված գիտնականի այս գրքում (էջ 32—37) համառոտակի, բայց գիտական պատշաճ բարեխղճությամբ վրացականի հետ միասին ցույց է տրված նաև հայկական տպագրական գործի զարգացման ընթացքը Ռուսաստանում: Նա իր հիշյալ աշխատության մեջ հայկական տպագրությանը անդրադառնում է նաև այլ առիթներով՝ վեր հանելով հայ և վրաց ժողովուրդների արժանավոր զավակների համատեղ ջանքերը Անդրկովկասում տպագրական գործի վերելքի համար:

Թիֆլիսի տպարանը, մեկնում է էջմիածին: Այս փաստը հաստատող, ինչպես նաև Արապյանի տպագրական գործունեության, Թիֆլիսի և էջմիածնի տպարանների հետ նրա ունեցած սերտ կապերի մասին բազմաթիվ նոր տեղեկություններ ենք գտնում «Դիվան հայոց պատմության» մատենաշարի առաջին գրքում, որը լույս է ընծայել Մատենադարանը Վարդան Գրիգորյանի աշխատասիրությամբ⁸: Այստեղ տպագրված Ղուկաս Կարնեցու գրագրությունից պարզ հրևում է, որ Արապյանը 1783 թ. դարձյալ նոր տառեր է ձուլել Թիֆլիսի տպարանի համար և այնուհետև գնացել էջմիածին: 1784 թ. հունվարին Կարնեցին Պոլսի Զաքարիա պատրիարքին գրում է. «Սիրելի որդին մեր, տպագիր տիրացու Պողոսն, որ յանցեալ ամսն գնաց ի Թիֆլիզ՝ առ ի շինել անդ զտպարան վրաց, որ և շինեալ ի կատար հասոյց, այժմ ահա դարձեալ է անտի ի սուրբ Աթոռս և զկնի աուրց ինչ գալոց է ի յօրհնեալ քաղաքդ ի յօթևանն իւր»⁹: Կարնեցին մի կոնդակ էլ գրում է Հերակլ թագավորին, որով տպարանի բարենորոգման առթիվ շնորհավորում է նրան¹⁰: Վրաց թագավորը, ի նշան կրօնատագիտության, մի դազգահ է նվիրում էջմիածնի տպարանին, որը տեղագրում և գործարկում է Արապյանը¹¹:

Հայ նշանավոր տպագրիչը, յայսպիսով, 1770—1780-ական թթ. մի քանի անգամ եղել է Թիֆլիսում և էջմիածնում, օգնել է տեղի տպարաններին: Հերակլ II-ը, երբ հայոց կաթողիկոսից խնդրում է, որ էջմիածնի միաբանները և Պոլսից թուղթ ուղարկեն Թիֆլիսի տպարանի համար, կաթողիկոսը նրան պատասխանում է. «Գիտասցէ պատուականութիւն Ձեր, զի մեք ի Պօլսոյ, որ երբեմն զթուղթ և կամ զայլ վասն տպարանիս մերոյ բերել տամք, ոչ թէ վարդապետքս մեր ինքեանց երթեալ ի շուկայէն առնուն, այլ ի ձեռն այլոց մարդկան հոգան, որպէս հոգևոր որդին մեր՝ վարպետ Պօղոսն, որ յայդր է, լաւապէս գիտէ: Քանզի երբեմն ևս ի ձեռն դորս և հօրն առժալ են զանթիմոնի և զայլ իր»¹²: Այստեղից պարզ է դառնում, որ Արապյանը օգնել է և՛ էջմիածնի, և՛ Թիֆլիսի տպարաններին, նրանց ապահովել անհրաժեշտ իրերով, տառատեսակներով ու թղթով: Նա Թիֆլիսի տպարանի համար պատրաստում է նաև տպագրիչներ ու որակյալ գրաշարներ: Նրա ջանքերով վերակառուցված տպարանում 1782 թ. սկսած տպագրվում են մի շարք խոցորիատուստ վրացերեն գրքեր, որոնց հիշատակարաններում նշվում է նրա երախտիքը Թիֆլիսի տպարանի վերակառուցման գործում: Նրա հեղինակությամբ վրացերեն լույս է տեսել նաև մի աշխատություն¹³, որի վերջաբանում մանրամասնորեն խոսվում է Հերակլ II թագավորի՝ Կոստանդնուպոլսից տպագրիչ (մեստամբե) Պողոս Օհանիսյանին (Արապյան) հրավիրելու և նրա միջոցով Թիֆլիսի տպարանը բարենորոգելու մասին: Նրա անձի ու գործի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ կան նաև Թիֆլիսում լույս տեսած վրացերեն այլ գրքերում¹⁴:

Ամենայն հավանականությամբ, հենց այդ ժամանակ էլ հայ մտավորա-

⁸ Տե՛ս «Դիվան հայոց պատմության», Երևան, 1984:

⁹ Նույն տեղում, էջ 408:

¹⁰ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1956, հ. 3, էջ 118:

¹¹ Տե՛ս «Դիվան հայոց պատմության», էջ 392:

¹² Նույն տեղում, էջ 371:

¹³ Պողոս Օհանիսյան, Գովք առաջին՝ Աոր տպարանի մասին, Տիֆլիս, 1782, ծավալը՝ 30 էջ, չափը՝ 11×18 սմ: Տե՛ս նաև՝ պրոֆ. Լ. Մելիքսեբ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 308:

¹⁴ Տե՛ս «Կոնդակի» («Մաշտոց»), Թբիլիսի, 1783, ծավալը՝ 320 էջ, չափը՝ 17×21 սմ: Լյա գրքի վերջաբանում հիշվում է, որ տիրացու Պողոս Օհանիսյան հայտն (հատյալ) Կոստանդնուպոլսեցին վերակառուցողն է Թիֆլիսի տպարանի: Այդ մասին տե՛ս նաև՝ «Վրացերեն գիրքը» մատենագիտությունը, հ. 1, 1629—1920, Թբիլիսի, Վրացական ՍՍՀ Գրապատի հրատարակություն, 1941, էջ 61—62, № 57—58:

կանությունը գիտակցում և մտածում է Պողոս Արապյանի աշակցութեամբ Քիֆլիսում հիմնադրել նաև հայկական տպարան, նամանավանդ որ Արապյանը իր հետ Կոստանդնուպոլսից բերել էր հայկական տառատեսակներ: Սակայն, վերահաս քաղաքական իրադարձությունները, Աղա-Մահմադ խանի արշավանքը Քիֆլիս ոչ միայն խանգարում են իրականացնելու այդ ծրագիրը, այլև 1795 թ. արշավանքի ժամանակ հրդեհվում և հիմնովին ավերվում է Քիֆլիսի միակ տպարանը:

Այնուհետև, հինգ տարի շարունակ (1795—1799 թթ.) Վրաստանում ոչ մի գիրք լույս չի տեսնում: Դարավերջին դարձյալ Հերակլ II թագավորը միջոցներ է ձեռնարկում վերականգնելու Քիֆլիսի տպարանը: Նա հրամայում է փորել տալ ավերված տպարանի շինությունները և հայտնաբերված իրերն ու տպագրական տառերը ներկայացնել իրեն: Սակայն Հերակլ II-ը 1798 թ. մահանում է: Կիսատ մնացած այդ գործը շարունակում է նրա որդին՝ Գեորգի XII-ը՝ Վրաստանի վերջին թագավորը, որի շնորհիվ ավերված տպարանի փոխարեն կառուցվում է նոր տպարան, ուր տեղադրվում են նախկին տպարանի փլատակներից հայտնաբերված տպագրական մեքենաներն ու զանազան իրերը: Այդ գործում մեծ դեր են խաղում նաև Պողոս Արապյանի պատրաստած տպագրիչներն ու գրաշարները, որոնց թվում և Քրիստափոր Բադիրիձեն (Բեժերաշվիլի): Նոր տպարանում տպագրության գործը սկսվում է 1800 թվականից¹⁵: Այդ նույն տարում Քիֆլիսի տպարանի օրինակով Քութայիսում բացվում է Վրաստանի երկրորդ տպարանը:

Այսպիսի ընթացք է ունեցել տպագրական արվեստը Վրաստանում XVIII դարում, որի զարգացման ու բարգավաճման գործում կարևոր դեր են խաղացել նաև հայերը:

XIX դարամուտին Անդրկովկասում տեղի են ունենում մի շարք քաղաքական խռոչոր իրադարձություններ. 1801 թ. Վրաստանը և Արևելյան Հայաստանի մի մասը միանում են Ռուսաստանին, իսկ 1828 թ. Ռուսաստանին է միանում նաև Արևելյան Հայաստանի մեծ մասը: Այդ ընթացքում Անդրկովկասի կենտրոնը սոցիալ-քաղաքական ու մշակութային խռոչը հեղափոխումների հետևանքով ու աշխարհագրական նպաստավոր դիրքով աստիճանաբար դառնում է Քիֆլիսը, որ դեպի իրեն է ձգում երկրամասի բոլոր ժողովուրդների մտավորական կարող ուժերը: Քիֆլիսը դառնում է Անդրկովկասի բազմազգ գրականության ու մշակութի, գրատպության, ինչպես նաև պարբերական մամուլի հրատարակման կենտրոն: Այստեղ, XIX դարի երկրորդ կեսին սկսում են արմատավորվել կապիտալիստական արտադրահարաբերությունները, որոնք էլ նոր թափ են հաղորդում երկրամասի տնտեսական, սոցիալ-քաղաքական ու մտավոր կյանքի զարգացմանը:

XIX դարում տպագրական արվեստը ևս աննախընթաց վերելք է ապրում: Դուտենբերգյան ձեռքի պարզ մեքենան իր տեղը զիջում է նոր, ավելի բարդ ու կատարելագործված արագատիպ մեքենային: Կատարելության են հասնում նաև գրաձուլման, տառատեսակների հարստացման ու ազնվացման եղանակները: Տեղի է ունենում լուսանկարի գյուտը, որը և նպաստում է ցինկոգրաֆիայի զարգացմանն ու տպատախտակների պատրաստմանը: Ստեղծվում են նաև տողաշար, տպագրված մամուլները կարող մեքենաներ, որոնք հնարավորություն են տալիս ստանալու ամեն տեսակի ու որակի տպագրական թղթեր: Այս ամենը մուտք են գործում Քիֆլիս, որը զարասկզբին արդեն դառնում է նաև հայ գրականության ու արվեստի, տպագրության ու պարբերական մամուլի առաջատար կենտրոն ոչ միայն Անդրկովկասում, այլև ամբողջ Ռու-

¹⁵ Տե՛ս Դ. Լ. Վատկշվիլի, Ըշվ. աշխ., էջ 42:

ասատանում: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ 1814 թ. Վրաստանի հայոց թեմի առաջնորդ է նշանակվում Ներսես Աշտարակեցին: Նա մտածում է Թիֆլիսում հիմնադրել մի կանոնավոր հայկական դպրոց, որի կարիքը զգացվում էր վաղուց: Ներսես Աշտարակեցին իր վաղեմի այդ երազանքը իրականացնում է 1824 թվականին: Նա տեղի հայ հասարակայնության տրամադրած միջոցներով ու Մոսկվայից Հովակիմ Լազարյանի ուղարկած գումարներով կառուցել է տալիս մի շենք, որ վիթխարի դեր ուներ կատարելու Կովկասի հայոց կրթական գործում և որը կոչվում է իր հիմնադրի անունով՝ Ներսիսյան դպրոց:

Նորաստեղծ այդ ուսումնական հաստատությունը, որ իր գոյությունը պահպանել է ուղիղ 100 տարի (1824—1923), հայ գիտությունն ու մշակույթին սովել է հարյուրավոր լուսավոր դեմքեր: Դպրոցի հիմնադիր Ներսես Աշտարակեցին ուներ նրա բարգավաճմանը նպաստող շատ ծրագրեր: Մեծանուն պատմաբան Լեոն իր «Հայ գրքի տոնը» արժեքավոր աշխատության մեջ նշում է, որ Ներսես Աշտարակեցին վաղուց մտադիր էր Վենետիկի Մխիթարյան վանքի նման մի գրական հիմնարկություն ստեղծել Հայաստանում: Այդ միտքը նա երազում էր իրականացնել իր հիմնադրած դպրոցի միջոցով, այն դարձնելով մշակութային առաջատար կենտրոն¹⁶: Սակայն այդ ծրագիրն իրականացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր ստեղծել տպարան, որը հնարավորություն կտար նաև աշակերտությանը ապահովել ոչ միայն դասագրքերով ու ուսումնական ձեռնարկներով, այլև կտպագրեր արտասարանային ընթերցանության գրքեր ու մեթոդական գրականություն: Այդ բանը նկատի ունենալով էլ Ներսես Աշտարակեցին առաջին հերթին ձեռնամուխ է լինում դպրոցին կից տպարան ստեղծելու գործին:

Թիֆլիսում հայկական տպարան հիմնելու ազգօգուտ գործում, դեռևս դպրոցի շենքի կառուցումը չավարտած, Ներսես Աշտարակեցուն օգնության է գալիս նրա վաղեմի բարեկամ ու համակիր, Վանից Թիֆլիս գաղթած ու իր առևտրական խոշոր գործարքներով ավելի հարստացած Գեորգ աղա Արծրունին¹⁷: «1817 թվականին իր առևտրական գործերով ճանապարհորդելով Արևմուտքից Նիսիսի մարզի քաղաքները, Արծրունին հասնում է Ամասիոնում, ուր սեղեկանում է, թե ինչ-որ հույանդացու մոտ հայերեն տպագրական տառեր կան պահված: Դրանք այն տառերն էին, որոնք դեռևս 1790-ական թվականներին պատրաստել էր սովել Առաքել Պողոսյան անունով մեկը և, չկարողանալով տպարան հիմնադրել, թողել էր անգործության մեջ: Գեորգ աղան, միջոցներ չլինելով՝ ձեռք է բերում բոլոր ձուլված տառերը, ինչպես և նրանց հայրերն ու մայրերը, բերում հասցնում է Թիֆլիս և ընծայաբերում Ներսեսի նորակերտ ուսումնարանին»¹⁸:

Ե՞րբ է այդ տպարանը Գեորգ Արծրունին Ամասիոնումից բերել, և արդյոք Թիֆլիսում մինչ այդ ուրիշ հայերեն տառերով տպարան գոյություն չի՞ ունեցել: Այս հարցի պատասխանը մեզ տալիս է Ա. Սրիցյանը: «Հարկ է ասել, — իր գրքում նշում է նա, — որ եթե չհաշվել այն փոքրիկ մամուլը, որ կար ուսաց զինվորական վարչության ձեռքում լոկ պաշտոնական թղթեր տպելու համար, այն ժամանակ սա պիտի համարվի Թիֆլիսի անդրանիկ տպարանը»¹⁹:

Ասվածից պարզ երևում է, որ Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի տպարանի

¹⁶ Լեո, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1986, էջ 809:

¹⁷ Տե՛ս Աղեքսանդր Սրիցյան, Պատմություն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ (1824—1899), հ. Ա (1824—1850), Թիֆլիս, 1898, էջ 121:

¹⁸ Գ. Լևոնյան, Ազվ. աշխ., էջ 220:

¹⁹ Ա. Սրիցյան, Պատմություն Ներսիսեան դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 120:

հիմնադրումից առաջ գոյություն է ունեցել հայերին տպագրություն: Վրաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո ռուսաց գիրավորական նորաստեղծ կառավարչությունը Քիֆլիսում անմիջապես ստեղծում է տպարան (1805 թ.): Եվ քանի որ ոչ միայն Քիֆլիսում, այլև ամբողջ Վրաստանում բնակվում էին մեծ թվով հայեր, ուստի և ռուսաց նորաստեղծ կառավարչությունը պետական զործերը ռուսերենի հետ մեկտեղ վարում է նաև հայոց ու վրաց լիզուներով: Այդ նպատակով նորաստեղծ տպարանը ձեռք է բերում հայերեն տառատեսակներ՝ պետական-պաշտոնական փաստաթղթեր ու այլ նյութեր տպագրելու համար: Թվում է՝ այս տպարանի գոյության փաստը ևս պետք է նկատի ունենալ, երբ խոսվում է Վրաստանում առաջին տպարանի հիմնադրման ու հայկական տպագրության սկզբնավորման մասին:

Գիտական գրականության մեջ ընդունված է ասել, որ Ներսիսյան դպրոցի տպարանը հիմնադրվել է 1823 թվականին: Սակայն այս թվականը ևս ճշգրտման կարիք ունի: Ա. Երիցյանը գրում է. «Քանի դեռ Ներսեսի ուսումնարանը չէր շինված, հիշյալ տպարանը զետեղվեց առաջնորդիս կառուցած կրպակներում, իսկ դրանից էլ առաջ՝ Վանքի առաջնորդարանում: Թեև 1819 թվականից տպարանն արդեն բաց էր համարվում, բայց հայտնի չէ մեղ, թե մինչև 1823 թվականը ինչ ու ինչ են տպվել»²⁰:

Հարց է ծագում. տպարանի գոյության սկիզբը պետք է համարել նրա հիմնադրման առաջին տարվանի՞ց, թե՞ այնտեղ ծնված անդրանիկ գրքի յուշբանջաման փաստական թվականից²¹: Անվիճելի փաստ է, որ Գեորգ Արծրունին տպարանը Քիֆլիս է բերել և Աշտարակեցուն նվիրել 1817 կամ 1818 թվականին: Մինչև 1819 թ. և դրանից հետո Ներսես Աշտարակեցին հարստացրել է այն: «Որովհետև,— ինչպես նշում է Ա. Երիցյանը,— Արծրունին սառերի և մյուս պարագաների հետ բերած էր միայն մի փոքրիկ փայտյա մամուլ, փասնորոյ Ներսեսը յուր միջոցներով ձեռք բերեց մի մեծ մամուլ և մյուս պակասորդ իրեղենները: Շուտով Արծրունվո օրինակին հետևեց քաղաքիս հայազն խիսան Աղամալ Խոջամինասյանցը՝ ընծայելով ռուսերեն տառերի պղնձ մայրերը: Զեռք բերվեցան նմանպես վրացերեն, պարսկերեն և լատինական տառեր: Տպարանն ուներ բավականաչափ պողպատյա զանազան զարդեր, ծաղկատառեր և պատկերներ»²²: Այդ տպարանում սկզբնական շրջանում Ներսես Աշտարակեցին տպագրել է Վրաստանի հայոց թեմին վերաբերող վիճակադրական տեղեկություններ և եկեղեցական-պաշտոնական փաստաթղթեր:

Այսպիսով, Ներսիսյան դպրոցի տպարանի հիմնադրման թվականը պետք է համարել 1819-ը և ոչ թե 1823-ը: Այդ տպարանում էլ 1823 թ. վերջերին յուշ է տեսնում հայերեն առաջին գիրքը Քիֆլիսում: Այդ գիրքը, որ կոչվում էր «Երատ բժշկության կալիթամարպս հիվանդութեան», ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ Ռուսաստանում առաջինն էր խոլերա (մաղձախտ) հիվանդության վերաբերյալ: Նրա հեղինակն էր Հնդկաստանից Քիֆլիս տեղափոխված բժիշկ Դավիթ Կարբեցի Դավթյանը (Մկրտչյան), որը Ներսես Աշտարակեցու խնդրանքով գրում է այդ բժշկարանը Հնդկաստանից դեպի Կովկաս և Եվրոպա տարածվող խոլերայի դեմ պայքարելու համար: Գրքի հեղինակը եղել

²⁰ Նույն տեղում, էջ 121:
²¹ Նշենք, որ ինչպես Գ. Առևելանը («Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1948, 1956), այնպես էլ Քրեյկիցը («Տիպո և Ցուս», և. Գոլթա, 1912) և շատ այլ հեղինակներ տպարանների հիմնադրման սկզբը որոշում են դրանցում տպագրված առաջին գրքերի լույս ընծայման տարեթվով: Մեզ սփում է՝ տպարանների հիմնադրման րևակալող որոշելու նման սկզբունքը քրոնիկոսացույց հեղինակից է ստալիս: Չէ՞ որ կարող է տպարանը ըստ սկզբնական լիցենզիայի վաղ, քան այնտեղ կառավարվեց առաջին գիրքը կամ թերթը:
²² Ա. Երիցյան, հշվ. աշխ., էջ 120:

էր Հնդկաստանում և զբաղվել էր այդ հիվանդութեան բուժման խնդիրներով: Հաջորդ տարում՝ 1824-ին, տպարանը տպագրում է Ներսես Աշտարակեցու աշխատութիւններից մեկը՝ «Համառօտութիւն անցից Քրիստոսականերտ Մայր Թոթոյ Հայոց Սրբոյ էջմիածնի», որը երկրորդ անգամ հրատարակվել է դարձյալ Թիֆլիսում, 1858 թվականին, Ներսիսյան դպրոցի տպարանում:

Ներսես Աշտարակեցու նախածնունդային և առևտրական Գեորգ Աթուրունու միջոցներով ստեղծված տպարանը փաստորեն Կովկասյան կառավարչութեան տպարանից հետո երկրորդ խոշոր տպարանն էր Թիֆլիսում: Եվ ճիշտ է նկատում Լեոն, երբ գրում է, թե շնայած իր աղքատութեանը, շնայած արվեստի խեղճ գրութեանը, Ներսիսյան դպրոցի տպարանը մի նշանավոր երեւոյթ էր «Կովկասի մայրաքաղաքում»²³, Սկզբնական շրջանում տպարանի աշխատանքները հսկում էր Գեորգ Աթուրունին, որը նաև տպագրական գործի լավ վարպետ էր: Ներսես Աշտարակեցու և նրա ջանքերով տպարանը սկսում է ծավալել գրահրատարակչական լայն գործունեություն: Հետագայում այստեղ էին տպագրվում նաև «Կովկաս» (1846—1847 թթ.) և «Մեղու Հայաստանի» (1858—1886 թթ.) թերթերը: Սրանցից առաջինը եղել է գրաբար, իսկ երկրորդը՝ աշխարհաբար:

Ներսես Աշտարակեցին ամեն ինչ անում է տպարանը հարստացնելու համար, ձեռք է բերում նոր մեքենաներ, ստեղծում հայերեն և ռուսերեն տառաձուլարան: Նա դեռևս 1825 թ., երբ դպրոցում դասատվութեան համար Փարիզից Թիֆլիս է հրավիրում համբավավոր գիտնական Հակոբ Շահան-Ջրպետյանին, իր հրավեր-նամակում նրան հանձնարարում էր դպրոցի տպարանի համար պատվիրել ֆրանսերեն տառեր և դրա հետ մեկտեղ իմանալ գրաձուլութեան կապարի բաղադրութիւնը և տպագրական ներկի պատրաստման եղանակը:

Հակոբ Շահան-Ջրպետյանը Ներսես արքեպիսկոպոսի ուղարկած իր մի պատասխան նամակում գրում է. «Վասն գաղղիացի տառից՝ մտածեցի, խորհրդակցեցեայ ընդ արուեստագէտ բարեկամս, և բացորոշեցաք ունիլ միայն վմայրս գրոց, վասնորոյ և յանձնեցաք քաջ փորագրողի միոյ Տիտօ Լեժէ աւունն (որ հռչակաւոր ոմն է յայս արհեստ ոչ միայն ի Փարիզ, այլև ի բոլոր Եւրոպիա) առ ի պատրաստել և ողորկել վասն մեր՝ ա) զմի շար մայրս բոլոր գրոց, բ) զմի շար մայրս նօտր գրոց, գ) զերեք շար մայրս գլխագիր տառից, դ) զերկու լաւ տիպար առ ի ձուլել զգիրսն, ե) զերեք գրաշար զանազան մեծութեամբ: Չայս ամենայն՝ զոր յանձնեալ եմ արդէն երկու ամիսք են, ընկալնլոց եմ ետ 15 կամ 20 աւուրց: Թիւ ամենայն մարցն լինին աւելի զ250: Չափ մեծութեան տառիցն, թէ գլխագրոց և թէ մանր գրոց, է իբր նոյն ընդ տառիցն Դիոնիսեայ քերականութեան իմոյ, այլ աւելի շքնաղ և արուեստաւոր, և սոքօք կարեմք զամբողջ մատենաս տպագրել այդր գաղղիացի կամ այլ եւրոպական լեզուօք»²⁴. Նամակագիրը խոստանում է տեղեկություններ իմանալ նաև կապարի բաղադրութեան ու տպագրական ներկի պատրաստման վերաբերյալ, ինչպես և «ի վերայ հարց և մարց ռուսալեզու գրոց»:

Սակայն, «մինչ Հակոբ Շահան-Ջրպետյանը կկատարեր իր խոստումները, — գրում է Ա. Երիցյանը, — Ներսեսի կարգադրութեամբ տպարանն արդեն կազմել էր իր ձուլարանը և ձուլում էր հայերեն և ռուսերեն տառեր: Բացի ձուլարանից, տպարանն ունեցավ նաև իր վիճագրությունը (լիտօգրաֆիա), վիճագրական մամուլ երեք քարեայ և մի արճճեա տախտակներով: Այստեղ կային նաև վրացերեն հարուստ տառատեսակներ: Ա. Երիցյանը, մի այլ առի-

²³ Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, Բ. 5, Երևան, 1986, էջ 609:

²⁴ Ա. Երիցյան, Աշխ. աշխ., էջ 129:

թով, խոսելով տպարանի գործունեության մասին, ավելացնում է. «Հարկ է ասել, որ հրատարակութեանց վերադիտողը, ավագ գրաշարն ու երեսկապողն էր ոմն Գեորգ, որ ծառայեց տպարանին բացվելու օրից մինչև գոցվելը (1830 թ.) և հայտնի էր «տպագրապետ» անունով: Դա իրեն օգնական ուներ մի գրաշար՝ հավաքարցի Հովակիմին: Ոչ պակաս ծառայած է նմանապես «տպիչ» Սարգիսն: Տպարանի վրա ծախս էր լինում ամսական՝ տպագրապետ Գևորգին 12 ու 50 կ., գրաշար Հովակիմին 4 ու., տպիչ Սարգսին 8 ու., մրազարկին 6 ու 50 կ., ի պետս մանր ծախուց 10 ու., ընդամենը 41 ուրլի, իսկ տարեկան՝ 492 ուրլի:

Տպարանիս համար մեծ դժվարությունը թուղթն էր, որ գալիս էր Ռուսաստանից, ու երբեմն ստիպված էին լինում բերել տալ փոստայով, շատ ծանր վճարով: Թուղթ շճարվելու պատճառով շատ անգամ տպագրությունը դադարում էր կամ հետաձգվում ամիսներով»²⁵:

Շուտով ներսիսյան դպրոցի տեսուչ է նշանակվում Մոսկվայից Թիֆլիս տեղափոխված Հարություն Ալամդարյանը: Նա ստանձնում է նաև տպարանի տնօրինությունը և կարճ ժամանակում այնտեղ կարգ ու կանոն է հաստատում ու տպագրության հանձնում կրոնական և քերականական դասագրքեր: Ալամդարյանի օրոք տպարանից լույս են տեսնում մի քանի անհրաժեշտ դասագրքեր և ընթերցանության ձեռնարկներ:

Տպարանի գործունեության առաջին շրջանում, մինչև 1830 թ., տպագրվում է 30 անուն գիրք, մոտ 18.000 օրինակ տպաքանակով: Այստեղ հրատարակված գրքերի տպաքանակը հղել է հետևյալը. դասագրքերի համար՝ մինչև 2.000 օրինակ, օրացույցների համար՝ 1.200 օրինակ, իսկ մնացած հրատարակությունների համար՝ 25—700 օրինակ:

Առաջին տասնամյակում այս տպարանը լույս է ընծայել մի շարք արժեքավոր աշխատություններ ու դասագրքեր, որոնցից են. «Այբուբեն Հայոց» (1825 թ.), Մ. Չամչյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի» (1826 թ.), «Թուղթ յայտարարութեան նոր կուսակալին Պասկեիչի, Պարսից պատերազմի մասին» (1827 թ.), ներսես Աշտարակեցու «Հռչակ ողորմութեան կայսեր Ռուսաց» (1827 թ.), «Առաջադրութիւն Հայոց նոր սարքվող զօրքի մասին» (1828 թ.), ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» (1828 թ.) պոեմը, «Դարաստան խրատուց» (1829 թ.) և այլն:

Ներսես Աշտարակեցին մտադիր էր Մխիթարյան միաբանների օրինակով Թիֆլիսի իր տպարանում հրատարակել եռամսյա մի պարբերական, որը կըրելու էր «Տարեգրութիւն Հայոց գրագիտական» վերնագիրը: Այն ունենալու էր զուտ գիտական բովանդակություն և հրատարակությունն սկսվելու էր 1826 թ. աշնանը կամ 1827 թ. սկզբներին: Արդեն պատրաստվում ու հավաքվում էին նյութերը, սակայն 1827 թ. սկսվում է ռուս-պարսկական պատերազմը և խափանվում է Աշտարակեցու նվիրական այդ ձեռնարկումը: Հանդեսի համար հավաքված նյութերը նույն՝ 1827 թ. հրատարակվում են «Երախայրիք ներսիսեան դպրոցի» վերտառությամբ, Ա և Բ հատորներով: Դրանք դպրոցի ուսուցիչների և սաների արձակ թարգմանություններն ու ինքնուրույն շափածո ստեղծագործություններն էին:

Այս բոլոր հրատարակությունների անվանաթերթերի վրա տպագրված են. «Ի նորբողոք տպարանի նորակերտ ուսումնարանի Հայոց, ընծայելոյ ի քաջատոհմիկ ազնի Գեորգայ Երեմեան Արծրունտոյ», «Հոգեւոր դպրոցի Հայոց ընծայելոյ յարժանայիշատակ ազնուական Գեորգեայ Արծրունտոյ»: Չնայած ներսես Աշտարակեցին քիչ ջանք չէր թափել տպարանը հիմնադրելու և հա-

ըրստացնելու համար, այդուհանդերձ նա Գևորգ Արծրունու անունը հիշատակում էր տպագրվող ամեն մի գրքի վրա՝ նրա դերն ընդգծելու նպատակով:

Սակայն, ցավոք, ներսիսյան դպրոցի և նրա տպարանի հաջողությունները առաջին շրջանում կարճ են տևում: 1830 թ. փակվում են և ուսումնարանը, և տպարանը: Հ. Ալամդարյանը առանձնանում է Հաղբատի վանքում: Ներսես Աշտարակեցին 1828 թ. արդեն գեներալ Պասկևիչի լարած մեքենայությունների հետևանքով գտնվում էր աքսորավայրում՝ Քիշնևում: Իսկ Գևորգ Արծրունին նույն թվականին մահացել էր խոլերայից: Այդպիսով, ուսումնարանը և տպարանը մնացել էին զոց ու անտեր:

Մի կարճ ժամանակ անց, Հովհաննես Կարբեցու կաթողիկոսության օրոք, ներսիսյան դպրոցը վերաբացվում է «Ուսումնարան Հայոց» անունով, իսկ տպարանը այդպես էլ մնում է փակ մեկ տասնամյակից ավելի և վերաբացվում է միայն 1841 թվականին, Կարապետ եպիսկոպոսի ջանքերով:

«Բանալով տասնմեկ տարի զոց մնացած տպարանի դռները,— հետադայում գրում է Ա. Ծրիցյանը,— գտան խառնիխուռն և փոշիի մեջ ածած երեք փայտյա տպագրական մամուլ, երկու մեքենա վիմագրության, քանի մի հատ լիտոգրաֆիի քարեր, քանի մի հատ գործիքներ գրաշարության և տառ թափելու, հայոց, ռուսաց և վրաց թափեալ թերակատար տառեր, ռուսաց և գաղղիացոց մայր տառեր և քանի մի կազմարարական գործիքներ և այլն: Հրամանավ Կարապետ արքեպիսկոպոսի՝ 1841 թվին ձեռք բերվեցան մնացած կարևոր պարագայք, ի թիվս որոց հայոց, ռուսաց և պարսից ու արաբացոց տառեր»²⁶:

Սակայն, շնայած դրան, կարճ ժամկետում տպարանը դուրս է բերվում այս ծանր վիճակից, ամեն ինչ նորից ընկնում է հուների մեջ: Եվ 1842—1843 թթ. ընթացքում հնարավորություն է ստեղծվում տպագրելու 6 ամուն գիրք: Դրանց էեջ ամենածավալունն ու արժեքավորը Սարգիս եպիսկոպոս Զալալյանի «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» աշխատության Ա հատորն է, որը լույս է տեսնում 1842 թ., Բ հատորը ևս տպագրվել է նույն տպարանում, 1858-ին: Այդ տարում տպագրվում են նաև «Ավետարանը», Հովսեփ քահանա Օրբելու «Այբբենարանը», իսկ հետագայում՝ Ռոստոմ Ծրղնկյանի «Համառոտութիւն սրտմութեան Հայոց» (1843 թ.), «Սաղմոս Դաւթի» (1844 թ.), Ն. Աշտարակեցու «Այցելութիւն սգաւորաց» (1847 թ.) և այլ գրքեր:

Տպարանը աստիճանաբար հարստանում է, ձուլվում են նոր տառատեսակներ, ձեռք են բերվում տպագրական մեքենաներ: Տպարանի վրա նորից իր խնամքն ու հոգատարությունն է տարածում Ներսես Աշտարակեցին, որը 1843 թ. արդեն Ամենայն Հայոց կաթողիկոսն էր: Նրա ջանքերով այդ շրջանում բարգավաճում է նաև ներսիսյան դպրոցը իր տպարանի հետ մեկտեղ: Այդ տպարանում արդեն հնարավորություններ են ստեղծվում թերթերի ու ամսագրերի տպագրության համար: Այնտեղ մինչև 1850-ական թթ. վերջը տպագրված գրքերի մեջ իրենց արժեքով ու պոլիգրաֆիական կատարումով աչքի են ընկնում «Ինկվիզիցիայի պատմութիւն» (1853 թ.), Գաբրիել Ծրեցփոխյանցի «Ռուսերէն-հայերէն բառարանը» (1854 թ.), «Բաղդատութիւն պատմութեան Մովսէս Խորենացու» (1858 թ.), Մաթևոս կաթողիկոսի «Բարի մարդ և բարի քրիստոնեա» (1860 թ.) աշխատությունը կրկին հրատարակությանը և այլ գրքեր: Առաջին անգամ 1858 թ. այս տպարանում է տպագրվել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» անդուգական վեպը:

Ահա այսպիսի արգասավոր ուղի է անցել ներսիսյան դպրոցի տպարանը, որը շուրջ շորս տասնամյակ, ընդհուպ մինչև 1860-ական թթ. սկիզբը, առա-

²⁶ Նույն տեղում, էջ 433:

չատար գրատպութեան օջախն էր կովկասահայութեան մեջ և, շնայած իր ազ-
քատ տպագրական բազային, պարբերաբար լույս աշխարհ էր հանում ինչպես
դասագրքեր ու գեղարվեստական գրականություն, այնպես էլ պարբերական
մամուլ: Եվ շնայած տպագրութեան որակով համեմատաբար թույլ են նրա
արտադրած գրքերը, բայց և այնպես նրա հիմնադրությունն ու գոյությունը
մշակութային մի խոշոր երևույթ էր Անդրկովկասի հայութեան կյանքում: Այն
մեծ խթան հանդիսացավ կովկասում հայ գրքի և տպագրական արվեստի զար-
գացման գործում:

Թիֆլիսի հայկական տպագրութեան սկզբնավորման ու զարգացման գոր-
ծին որոշակիորեն նպաստել է Հակոբ և Դավիթ Արզանյանց եղբայրների տպա-
րանը: Սրա արժեքը մեծ է նրանով, որ գործել է Ներսիսյան դպրոցի տպարանի
10-ամյա ընդհատման շրջանում՝ 1830—1843 թվականներին: Արզանյանց եղ-
բայրների տպարանը փաստորեն այն ժամանակ Թիֆլիսում գործող միակ
հայկական տպարանն է եղել: Նրա հիմնադիրները նոր տեսակի տպագրական
տառեր են ձուլում և տպարանը հարստացնում նաև ռուսական, վրացական,
լատինական ու արաբական տառատեսակներով:

Այս տպարանը իր գոյութեան ընթացքում հրատարակել է տասից ավելի
գրքեր: Առաջին անգամ այստեղ է տպագրվել Խ. Արովյանի «Նախաշաւիղ
կրթութեան ի պէտս նորավարժից» նշանավոր ձեռնարկը (1838 թ.): Այստեղ
են տպագրվել նաև «Դարաստան հատընտիր գրուածոց հայ մատենագրաց»,
«Այբբենարան հայոց ի պէտս նորուսումն մանկանց» (1838 թ.), նույն՝ Ար-
զանյանց եղբայրների հեղինակած «Համառօտ քերականութիւն Հայոց» (1840
թ.) դասագրքերը, «Բժշկական տեղեկատուն» (1843 թ.), ինչպես և՛ «Առական
և պատմութիւններ նախնական ընթերցանութեան համար» (1839 թ.) ռուսերեն
ժողովածուն, որն առաջինն էր: Այս տպարանում հետագայում, 1856 թ. տը-
պագրվել է նաև «Պատմութիւն Հին և Նոր Կտակարանաց» գիրքը:

Մյուս տպարանը, որ Թիֆլիսում կազմակերպվել է մի փոքր ավելի ուշ,
պատկանել է ինչ-որ Ղուլյանց և Շահմուրադյանց դործընկերների: Այստեղ
1849 թ. տպագրվել է «Կրթութիւն ավետարանական ի պէտս հայ դպրոցաց»,
իսկ 1850-ին՝ Ալեքսանդր Արարատյանի «Ճակատ անմահից, գեղերական ար-
կածից Յակոբ արդարոյն հագներգութեամբ շափատրեալ ի համբերութեան և
ի խրատ» գրքերը:

XIX դարի կեսերին հայ տպագրութեան գործը Թիֆլիսում աննախընթաց
վերելք է ապրում: 1850 թ. նոր Նախիչևանից Թիֆլիս է տեղափոխվում Գաբ-
րիել քահանա Պատկանյանը, որը սկսում է հրատարակել իր հիմնադրած
«Արարատ» շաբաթաթերթը (լույս է տեսել մինչև 1851 թ. ապրիլ ամիսը): Այդ
թերթի յուրաքանչյուր համարի վերջին էջում միշտ տպագրվում էր. «Ի Տպա-
րանի տեսնո զարրիէլ Պատկանեան»: Իսկ 1850 թ. դեկտեմբերի 9-ից դրան
ավելացված է. «Տպարանս նորոգեցաւ օգնութեամբ գերապատիւ եւ ազգասէր
իշխանի Նախիչևանայ նահանգական ուսումնարանի պատուանուն վերատեսչի
աղա Աւետիքի Գալստեան Տէր-Գրիգորեանց»: Իսկ նույն լրագրի 1851 թ. փե-
տրրվարի 3-ի համարում «Տպագրութիւն ի Հայս» վերտառութեամբ կա մի
հոդված, որից երևում է, որ Գ. Պատկանյանի վաղեմի երազանքն է եղել ու-
նենալ իր սեփական տպարանը: Այդ նպատակով էլ նա նոր Նախիչևանում ու
Աստրախանում «ազգասեր և ուսումնասեր» անձանցից գումարներ է վերցրել
և 1831 թ. Քիշնևում ու Օդեսայում իր ունեցած պողպատյա հայր տառերը
շնորհալի արվեստագետների ու պոլիգրաֆիստների միջոցով ուղղել է տվել
և դրանց կաղապարներով ձուլել է տվել նոր տառատեսակներ, որոնցով էլ
Թիֆլիսում սկսում է տպագրել իր «Արարատ» նշանավոր շաբաթաթերթը: Սա-
կայն նրա այդ տառատեսակները գրեթե ոչնչով չեն տարբերվում Ներսիսյան

դպրոցի տպարանի տառատեսակներից և «Արարատն» էլ ոչ մի բանով չի գանազանվում հիշյալ տպարանի լույս ընծայած գրքերից. բոլորն էլ գրեթե նույն որակն ու տեսքն ունեն: Սակայն, ինչպես նշում է Գ. Լևոնյանը, որքա՞ն է տևել Տեր-Գաբրիելի տպարանը կամ այնտեղ, բացի «Արարատից», ուրիշ զործեր տպագրվե՞լ են, թե՞ ոչ, մեզ հայտնի չէ: Միայն հայտնի է, որ 1850-ին, այս տպարանից է դուրս եկել «Համառոտ հրահանգ քրիստոնէական հաւատոյ» 16 էջանոց գրքույկը:

1850-ական թթ. վերջերին Թիֆլիսում հիմնադրվում է մի տպարան ևս: Իս Գաբրիել Մելքումյանի և Համբարձում էնֆիաճյանի տպարանն էր, որը շուտով ձեռք է բերում մեծ համբավ: Մինչ այդ տպարանի հիմնադրումը, 1840-ական թթ. վերջերին Ավետիք և Համբարձում էնֆիաճյան եղբայրները Թիֆլիսի կենտրոնում, նախկին Երևանյան հրապարակում գտնվող մի շենքի վերնահարկում, որը հետագայում Թամամշյանների թատրոնի և քարվանսարայի հիմքն է դառնում, հիմնադրում են գրավաճառանոց: Այդ գրավաճառանոցը այն ժամանակ քաղաքում լինում է միակը: Դրանից տասը տարի անց, 1850-ական թթ. վերջին Համբարձումը Գաբրիել Մելքումյանի ընկերակցությամբ նույն շենքում բացում է վերոհիշյալ տպարանը: Մելքումյանը շուտով թողնում է այն ու հեռանում, որից հետո տպարանը պատկանում է Հ. էնֆիաճյանին: Սա և տպարանատերն էր, և հրատարակիչը:

Առաջին շրջանում այդ տպարանում սկսում է տպագրվել Մ. Աղաբեկյանի «Կոռնկ Հայոց աշխարհին» ամսագիրը (1860—1863 թթ.), որի տիտղոսաթերթին նշվում էր. «Ի հայ տպարանի Գաբրիելի Մելքումեանց և Համբարձումայ էնֆիաճեանց»: Մեկ տարի անց, 1862-ից այս տպարանը ներսիսյան դպրոցի տպարանից իր ձեռքն է առնում նաև «Մեղու Հայաստանի» լրագրի հրատարակությունը:

Այս տպարանից են լույս տեսել նաև Գաբրիել Խատիսյանի «Սէր» մանկական ընթերցանության գիրքը (1861 թ.), Մատթեոս կաթողիկոսի «Հայելի սստուածային շնորհաց» աշխատությունը (1862 թ.), Խ. Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն (1864 թ.), Գ. Սունդուկյանի «Գիշերվա սաբրը խեր է» (1866 թ.) և այլն: Հետագայում ներսիսյան դպրոցն էլ իր գրքերը տպագրել է տալիս այս տպարանում: Օրինակ, Ստ. Պալասանյանի 1865 թ. լույս տեսած «Պատմութիւն Հայոց գրականութեան» արժեքավոր գրքի վրա գրված է. «Տպագրութիւն ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի ի տպարանի Հ. էնֆիաճյան և Ընկերութեան»: 1860-ական թթ. կեսերից մինչև 1870-ական թթ. վերջերը այս տպարանից են լույս տեսնում բազմաթիվ արժեքավոր գրքեր ու պարբերականներ: Այստեղ են տպագրվում «Հայկական աշխարհ» (1864—1871 թթ.), «Վաճառական» (1866—1867 թթ.), «Փորձ» (1876—1881 թթ.), «Գարուն» (1886 թ.) պարբերականները, ինչպես նաև «Համառոտ մանկաւարժութիւն» (1875 թ.) արժեքավոր գիրքը:

Հ. էնֆիաճյանի տպարանի առավելությունն այն էր, որ նա ուներ ձուլարան: Եվ այդ տպարանը, ինչպես նշում է Լեոն, նշանավոր ծառայություն մատուցեց ուսահայոց տպագրական գործին նրանով, որ նա գործածություն մեջ մտցրեց Փարիզի նորածե հայերեն տառերից շատերը, իսկ Վիեննայի տառերից մի տեսակը, որը գործ էր ածվում գրքերի համար, բարեփոխեց, հեռացնելով նրանց տգեղ հին գլխագրերը և հարմարեցնելով նրանց փարիզյան գլխագրերը: Ստացվեց մի ինքնուրույն տպարանական գործ, որը կարելի է անվանել Թիֆլիսի տիպ: Աչքի ընկնող մաքուր տպագրություն, անցյալի համեմատությամբ մեծ ճաշակավորություն— այս հատկություններով էր, որ էնֆիաճյանի տպարանը շուտով բոլորովին խլացրեց ներսիսյան դպրոցի տպարանը և իր ձեռքն առավ համարյա բոլոր հայերեն տպագրությունները: Այս

տիրապետող դիրքը նա պահեց իր ձեռքում համարյա մինչև 1880-ական թվականները: Թեև մինչ այդ էլ նոր տպարաններ բացվեցին և մրցակից հանդիսացան, բայց էնֆիաճյանի ուժը իր ձուլարանն էր, որ տառեր էր մատակարարում և մյուս տպարաններին²⁷:

1880-ական թթ. սկզբին Ն. էնֆիաճյանի տպարանն անցնում է Մ. Ռոտինյանցին, որը, ձուլարանը խափանելով, տպագրական գործը հաջողությամբ շարունակում է մինչև XIX դարի վերջը, հետագայում ժառանգություն թողնելով Տ. Ռոտինյանցին: 1888 թ. այստեղ է սկսում տպագրվել Ա. Արասխանյանի «Մուրճ» ամսագիրը, ինչպես նաև «Քուշակ նահապետի երգերը», «Գիրք թղթոցը» և այլ գրքեր:

XIX դարի 60—70-ական թթ. Թիֆլիսը, որպես հայ գրատպության կենտրոն, առաջատար դիրք էր նվաճել ոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ Ռուսաստանի նկատմամբ: Այդ շրջանում Թիֆլիսում արդեն լույս էին տեսնում մեծ քանակությամբ հայերեն գրքեր: Ըստ վիճակագրական տվյալների, 1860-ական թթ. հայերեն գրքի հրատարակությունը Թիֆլիսում գրավում է երկրորդ տեղը: Այսպես, 1862—1868 թթ. Թիֆլիսում տպագրվել են ռուսերեն 91, հայերեն 53, վրացերեն 42, կաբարդիներեն 4, օսերեն 2 անուն գրքեր²⁸: Իսկ դրանից երկու տասնամյակ անց՝ 1890-ական թթ. Թիֆլիսը արդեն հայ գրքի հրատարակությամբ գրավում է առաջին տեղը ամբողջ Կովկասում: Օրինակ, միայն 1891 թ. Կովկասում հրատարակվել են հայերեն 131, ռուսերեն 114, վրացերեն 79, թուրքերեն 7 անուն գրքեր²⁹: Ահա այս շրջանում է, որ Թիֆլիսում հիմնադրվում է Հովհաննես Մարտիրոսյանի տպարանը, որը իր երկարատև կյանքով և տպագրած արտադրանքով ու որակով առաջնակարգ տեղ է գրավում: Այստեղ են տպագրվում գիտական աշխատություններ, դասագրքեր, բամանակի գեղարվեստական գրականության մեծ մասը, մի շարք առաջատար պարբերականներ, որոնցից են՝ «Մշակ» (1872—1921 թթ.), «Մանկավարժական թերթ» (1878—1879 թթ.), «Արձագանք» (1882—1898 թթ.), «Աղբյուր» (1883—1918 թթ.), «Հորիզոն» (1894 թ.) և այլն: Այս տպարանից է լույս տեսել նաև Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը:

1890-ական թթ. Հովհ. Մարտիրոսյանի տպարանն անցնում է նրա որդուն՝ Կոստանդին Մարտիրոսյանին, որն իր հոր գործը շարունակում է մինչև 1910-ական թթ.: Այս տպարանից ավելի մեծ համբավ է ձեռք բերում Հովհ. Մարտիրոսյանի մյուս որդու՝ Մնացական Մարտիրոսյանի առանձին տպարանը, որը հիմնադրվելով 1896 թ., իր գոյությունը շարունակում է պահպանել մինչև մեր դարի 20-ական թթ.: Գ. Լևոնյանը նշում է, որ այդպիսի մի ճոխ և բարեկարգ տպարան Թիֆլիսը տեսնում էր առաջին անգամ: Արտասահմանյան բնտիր մեքենաներ, հայերեն և օտարալեզու տառերի բազմազանություն, որակյալ բանվորներ, տպարանատիրոջ մասնագիտությունը և ճաշակը, — այս բոլորի շնորհիվ Մ. Մարտիրոսյանի տպարանից դուրս եկած գործերը ոչնչով ևս չէին մնում մոսկովյան հրատարակություններից³⁰: Նրա տպարանում են լույս աշխարհ եկել «Թատրոն» (1893—1905 թթ.), «Ազգագրական հանդես» (1896—1916 թթ.), որի անդրանիկ համարը տպագրվել է Շուշիում, «Գեղարվեստ» (1908—1921 թթ.) հանդեսները: Այս տպարանը հայտնի է նաև Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան» հրատարակությամբ (1898 թ.):

²⁷ Առ, Երկրի ժողովածու, հ. 5, Երևան, 1986, էջ 609—610:

²⁸ Տճ՝ «Сборник статистических сведений о Кавказе», Թիֆլիս, 1869, էջ 165:

²⁹ Տճ՝ «Кавказский календарь», Թիֆլիս, 1892, էջ 239—254:

³⁰ Գ. Լևոնյան, Աշխ., էջ 227:

Այստեղ անհրաժեշտ է նշել այն մեծ դերը, որ Թիֆլիսի տպարանների զարգացման համար խաղացել է գերմանացի Մադերի ձուլարանը: Այստեղ բազմաթիվ փորձեր են արվում հայկական տառերին տալու համար և գեղեցիկ ձևեր: Սակայն Մադերը այդ գործում շոշափելի հաջողության չի հասնում, և հայերեն տառերի փարիզյան ձևերը դարձյալ մնում են անգերազանցելի: Հենց այդ ձևերի բազմացմանն էլ դարկ է տալիս Մադերը իր ձուլարանում:

Թիֆլիսը, որպես հայ մշակույթի խոշոր կենտրոն, XX դարի սկզբներին դարձյալ մեծ հեղինակություն էր վայելում: Այստեղ էին ձևավորվել քաղաքական կուսակցությունները, խմորվել գիտական ու հասարակական միտքը, զարգանում էր գրականությունն ու արվեստը: Այդ ամենի առաջընթացին մեծապես նպաստում էր տպագիր խոսքը, որը կյանք էր առնում տպարանների միջոցով:

Անցյալ դարավերջին և նոր դարասկզբին Թիֆլիսում հիմնադրվում են մի շարք նոր տպարաններ: Դրանց մեջ ամենանշանավորներից է 1881 թ. հիմնադրված Մովսես Վարդանյանի տպարանը, որը, հետագայում անցնելով նրա որդուն՝ Վահագն Վարդանյանին, գործում է մինչև մեր դարի առաջին տասնամյակի վերջը: Այս տպարանում տպագրվել են «Դիցազուներ ըստ հորենացույ», «Ուղեցոյց հայ ուսուցչի», «Ինքնուսուցիչ ուսուերէն լեզուի» գրքերը, որոնց հետ նաև «Վարժարան» (1882—1884 թթ.) և «Գործ» (1908 թ.) ամսագրերը:

Թիֆլիսում 1891 թ. Տիգրան Նազարյանցը ևս հիմնադրում է մի տպարան, որին տրվում է «Արօր» անունը: Այս տպարանը ևս գործում է մինչև 1910-ական թթ. և լույս է ընծայում Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը՝ աշխարհաբար (1891 թ.), Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթը և բազմաթիվ այլ գրքեր ու պարբերականներ:

Հայկական տպագրության պատմության մեջ միակ կինը, որ ստեղծել է տպարան, եղել է օր. Նվարդ Աղանյանցը: Նրա տպարանը Թիֆլիսում մեծ համբավ է ձեռք բերում, ուր տպագրվել են հայերեն 20 անուն պարբերականներ: Թիֆլիսում գործած ոչ մի հայկական տպարան այդպիսի մեծ թվով պարբերականներ չի տպագրել իր գոյության բոլոր տարիներին: Այստեղ են տպագրվել նաև Լեոյի «Հայ գրքի տունը» (1912 թ.), «Հայոց լեզուի տարրական բերականութիւն» գրքերը:

1905—1907 թթ. Ռուսական առաջին հեղափոխությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում մամուլի ու տպագրական գործի զարգացման համար: Ինչպես ամենուր, այնպես էլ Թիֆլիսում ստեղծվում են շատ տպարաններ, որոնցից աչքի են ընկնում «Հերմէս», «Ձանգակ», «Յառաջ», «Էսպերանտո» (Հ. Տեր-Աստվածատրյանի), «Գուտենբերգ», «Հրատապ», «Պրօգրէս» (Լ. Պողոսյանի), «Մամուլ», «Էպոխա», «Մասիս», «Էկօնոմիկա» և այլ մասնավոր պատկանության օջախներ: Դրանք հրատարակում են հայերեն և այլ լեզուներով բազմաթիվ գրքեր ու պարբերականներ, ինչպիսիք են, օրինակ, «Մայրենի լեզու» (1908 թ.), «Այբբենարան» (1909 թ.) գրքերը: Այստեղ պետք է նաև նշել, որ Թիֆլիսում տարբեր ժամանակներում գործել են Ա. Մ. Թառումյանի, Զ. Գրիգորյանի, Մելիք Շահնազարյանի, Մուղղուսի Հակոբյանի, Քալանթարյանի, «Մելիքյան և ընկերություն», «Հայկական աշխարհ», «Կուլտուրա», ս. Գայանյան վանքի, բանվորական և այլ տպարաններ:

Ռուսական տպարաններից պետք է նշել Գլխավոր կառավարչության Կովկասի փոխարքայության տպարանը, որն, ինչպես արդեն նշել ենք, իր ստեղծման շրջանից (1805 թ.) մինչև վերջ (1917 թ.) տպագրել է հայերեն պաշտոնական փաստաթղթեր, թերթեր ու գրքեր: Սրա հետ մեկտեղ հայերեն գրքեր ու պարբերականներ են տպագրվել «Գուտենբերգ», «Նաղեժդա», «Պրօգրէս»,

«Ալոպո», «Բրատստովո», «Հյուրիա», «Սորոպան», Ե. Շապոտնի, Ա. Ա. Միխելսոնի, Կ. Պ. Կովչոսկովի, Լ. Գ. Կրամարիկոյի, Գ. Գ. Յուստերգիկի, Պեարովի, Էամեմպախերի և այլ տպարաններում: Օրինակ, «Կավկազ» ռուսական տպարանում է տպագրվել «Նոր Դար» (1884—1908 թթ.) հայերեն թերթը, Գ. Գ. Յուստերգիկի տպարանում՝ Հ. Թումանյանի «Շունն ու կատուն» (1908 թ.) և այլն:

Հայերեն թերթեր, գրքեր ու հանդեսներ են տպագրվել նաև վրացական տպարաններում, որոնցից հիշարժան են Վրաց հրատարակչական ընկերության, Ա. Կերեսելիձեի, Բ. Կիլաձեի, Ս. Լոսորբերիձեի, Վ. Գ. Զարկվիանու, Մ. Շարաձեի, Ար. Քութաթելաձեի, «Շրոմա», «Քարթլի», «Զմորա», «Գ. Մերեթելի և ընկերություն» տպարանները: Բացի այս տպարաններից, տպագրական բեղմնավոր գործունեություն են ծավալել հայկական հրատարակչական միջաբեկագրավոր ընկերություններ, որոնցից աչքի են ընկնում «Թիֆլիսի ընկերություն հայերեն գրքերի հրատարակության», «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերություն», ապա «Կովկասի հայոց հրատարակչական ընկերություն» և «Սու. Լիսիցյան և ընկերություն» հրատարակչությունները: Սրանցից «Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը», իր գոյությունը սկսելով XIX դարի վերջերից, լույս է ընծայել մեծ թվով գեղարվեստական արժեքավոր գրքեր, հատկապես համաշխարհային դասական գրողների հրկերի հայերեն թարգմանություններ:

Մեկ հարյուրամյակի ընթացքում Թիֆլիսում գործած շորս տասնյակի հասանող հայկական տպարաններից մի քանիսը աչքի էին ընկնում իրենց տպագրական բարձր ճաշակով ու նորագույն ճարտարվեստով: Եվրոպայից այստեղ էին բերվում տպագրական նոր սարքավորումներ, էլեկտրական մեքենաներ, լավագույն տառատեսակներ: Այս տեսակետից աչքի էին ընկնում Մ. Մարտիրոսյանի և Ն. Աղանյանցի տպարանները, որոնց հրատարակած գրքերն ու թերթերը տպագրական արվեստով ու ձևավորմամբ ժամանակին մրցում էին Ռուսաստանի ու Եվրոպայի լավագույն տպարանների արտադրանքի հետ⁸¹:

Թիֆլիսում մեծ վերելք է ապրել նաև գրքի ձևավորման, լուսանկարչության, ցինկոգրաֆիայի ու գծանկարչության արվեստը: Այստեղ գործել են այդ բնագավառների հայ և արտասահմանցի, ռուս և վրացի ճանաչված վարպետներ, նշանավոր գեղանկարիչներ, որոնք մեծապես խթանել են տպագրության դարգացմանը:

Թիֆլիսի վերոհիշյալ տպարաններից բացի, անցյալ դարավերջին ու մեր դարասկզբին հայկական տպարաններ են ստեղծվել նաև Վրաստանի ու նրա հարակից շրջանների հայաբնակ գավառներում: Դրանցից կարևորներն են Ախալցխայի, Ախալքալաքի, Բաթումի և Սուխումի տպարանները: Մամուլի և գրատպության այդ օջախները մեծ դեր են կատարել հայ գիրն ու գրականությունը (և ոչ միայն հայ), տպագիր խոսքը Վրաստանի հայաշատ վայրերում տարածելու գործում:

Ախալցխայում հայկական առաջին տպարանը հիմնադրվել է 1880-ական թթ. կեսերին, ուր նշանավոր մշակութային գործիչ Խորեն Ստեփանյան 1885 թ. տպագրել է իր հանրահայտ «Մանկավարժանոց» ամսագիրը: Ի դեպ, այդ ամսագիրը 1884-ին լույս է տեսել Թիֆլիսում, 1885-ին՝ Ախալցխայում, 1886-ին՝ Կրկին Թիֆլիսում, 1887-ից՝ Պեաբբերուզում: Այդ տպարանի հիմնադիրը Լդել է Մկրտիչ Ղալեմքարյանը, որը 1889-ին տպագրել է Շիրվանազադեի «Քանդած օջախը», իսկ 1901-ին՝ «Որբուկի օրը» գրքերը:

⁸¹ Ռ. Իշխանյան, Հայ գիրքը. 1512—1920, էջ 148:

Ախալցխայի մյուս տպարանը պատկանել է Մարտիրոս և Հայկ Մարտիրոսյան եղբայրներին: Նրանք 1905—1906 թթ. տպագրել են «Նոր վեպիկ», «Արյան վրեժ» գրքերը, իսկ մինչև 1910-ական թթ.՝ նաև այլ ժողովածուներ: Լեյստեղ 1911 թ. Սիոն վ. Տեր-Մանվելյանի հեղինակութամբ լույս է տեսել «Նզիզի կուրմանժ» ուսումնասիրությունը, որը արժեքավոր տեղեկություններ է պարունակում եզիզների կուրմանժ ցեղի ազգագրության, կենցաղի, լեզվի ու սովորույթների մասին: Հիշյալ տպարանում են տպագրվել նաև «Շարժում» թերթը (1917—1918 թթ.), բանաստեղծ Պերճ Գայֆեճյանի «Հովիկ» ժողովածուի երկու պրակը (1918—1919 թթ.), նույն հեղինակի «Կյանքի գնով» արձակ բանաստեղծությունների ժողովածուն (1909 թ.) և այլ գրքեր: Ախալցխայում մեր դարասկզբին տպարան է հիմնել նաև Խորեն Արամյանցը, որը 1906-ին լույս է ընծայել «Ավաստրիայի ճգնաժամը» գիրքն ու այլ գրքուկներ:

Ջավախքի կենտրոն Ախալքալաքում ևս հայկական տպարան է հիմնադրվել անցյալ դարավերջին: Այն պատկանել է Ա. Գրիգորյանին: Սակայն ինչ գրքեր են տպագրվել այնտեղ, չգիտենք: Միայն հայտնի է, որ այդ տպարանում 1913—1916 թթ. տպագրվել է «Ջավախք» երկշարաթաթերթը:

Բաթումում հայկական առաջին տպարանը ստեղծել է Ն. Գուրուկյանը, որը 1901—1904 թթ. տպագրել է «Ընթերցողների ուղադրութեանը», «Պատիկ ԱՏեր» և «Որբուկների արցունքները» գրքերը: Որիշ ինչեր են տպագրվել այս տպարանում, հայտնի չէ: Այն փակվել է Ռուսական առաջին հեղափոխությունից հետո, ստոլիպինյան ուսուցիչի շրջանում: Բաթումի հայկական մյուս տպարանը հիմնադրվել է ավելի ուշ՝ Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին: Իսկ Սուխումում հայկական տպարան գործել է մեր դարասկզբին, որտեղ տպագրվել են «Լույս» (1912—1913 թթ.), «Նոր կյանք» (1918 թ.) և «Փարոս» (1919 թ.) հայերեն թերթերը:

Հիմնականում սրանք են Վրաստանի գավառներում գործած հայկական տպարանները: Խորհրդային շրջանում ևս հիշյալ քաղաքներում հիմնադրվել ու գործել են հայկական տպարաններ, որոնց մասին այստեղ չենք խոսում:

Այսպիսով, Վրաստանում անցյալ դարում և մեր դարասկզբին գործել են շուրջ հինգ տասնյակ հայկական տպարաններ, որոնք տպագրել են բազմաթիվ արժեքավոր գրքեր ու 200-ից ավելի պարբերականներ: Հարկ է նշել, որ մեկ հարյուրամյակի ընթացքում Վրաստանում մեծ ծաղկում ապրած հայկական տպագրական գործը իր բարեբար ազդեցությունն է թողել ինչպես Թիֆլիսում, այնպես էլ գավառներում հիմնադրված վրացական, ռուսական, թուրքական ու այլատառ տպարանների գործունեության և զարգացման վրա:

В. С. МАГАЛЯН—Армянское книгопечатание в Грузии (XIX—начало XX вв.).— В статье на основе анализа первоисточников и сопоставления фактов представляется краткий обзор начального этапа формирования и развития армянского книгопечатания в Грузии в XIX веке и в начале XX века. Автор уточняет дату основания первой армянской типографии в Тифлисе — 1819 г., вместо принятого в научной литературе 1823 года. Одновременно на основании фактов делается заключение о том, что печатное дело на армянском языке в Грузии возникло вместе с основанием типографии русского наместничества, деятельность которой длилась с 1805 г. по 1917 г. В этой типографии наряду с русским и грузинским печатались указы и документы, а позднее и книги на армянском языке.

В статье анализируется деятельность около 50 армянских типографий, действовавших в Тифлисе и других армянонаселенных городах и губерниях Грузии. В течение ста лет из этих типографий вышли тысячи ценных книг и более 200 переводических изданий, что свидетельствует о расцвете армянского печатного дела в Грузии.